

1479

Young Mvt  
M. Reb

1914 7q.

21045  
29-84

03 AUG 2009

ԵԶՆԻԿ ա. քահ. ԵՐԱԿԵԱՅՑ  
Կրօնուայց Թիֆլիսի առաջին իզական գիմնազիոնի

# ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՈՒԻ


ԱՌԱՋԻՆ ԳՐԲՈՅՑ

ԳԼԽԱԽՈՐ ԱՀՈԹՔՆԵՐ ԵՒ ՄԵԾ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱԱ-ՕՏ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ,

Գետական դպրոցների պատրաստական դասարանների  
հայ աշակերտունների եւ աշակերտների համար:

ԻՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1966 Հ 20 կոմ.



Թ. ի ժ ի ս

Արան ՀՀԵՐՄՈՒՄ, Դրաֆուկայիս գող. № 6.

1914

1479

ԵԶՆԻԿ ա. քահ. ԵՐԶՆԿԵԱՆՑ  
Կրօնուայց Թիֆլիսի առաջին իզական գիմնազիոնի

2(075)

6-84

# ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՈՆԻ

ԱՌԱՋԻՆ ԳՐԲՈՅՑ

ԳԼԽԱԽՈՐ ԱՂՕԹԲՆԵՐ ԵՒ ՄԵԾ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱԲՈՏ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ:

Գետական դպրոցների պատրաստական դասարանների  
հայ աշակերտուների եւ աշակերտների համար:

ԽՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

500

Թ. Ի. Ժ. Ի. Ա

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Գրաֆիկայա փող.

1914

10 APR 2013



31024-61

---

Այս «Դասագիրք կրօնի» գրքոյիկի տպագրութիւնը թոյլատրուած է Հայոց Հոգևոր Բարձրագոյն Իշխանութեան կողմից և ճանաչուած է Կովկասի Ռւսումբարանական Խորհրդի կողմից ձեռնարկ պետական գպրոցների համար:

---

միջնուն ուն ճառողութանք—ճառողու մշտական մասեց  
վայր ժամանելու վայր մերկ մշտականքը գտնա  
ւ ուղարկած առաջարկը ուղարկած առաջարկը ուղարկած  
առաջարկը չ մշտականքը—ուն այս վայր մշտական  
առաջարկը առաջարկը այս վայր մշտականքը լուսավայր  
կ հայտնաբերելու նպատակ և վերաբ ուղարկանքանը  
մշտականք առ ուղարկանքանը մինչ մշտականք դադ  
առաջարկան եթե ուղարկանք ուղարկան ուղարկան

## ԵՐԿՈՒԻ ԽՕՍՔ և մշտական ուղարկան

Ընդհանրապէս նկատուած է, որ պետական դպրոցներում կթօնութուցչի պաշտօն ստանձնող արթանապատիւ հայրերը հանդիպում են մեծամեծ դժուարութիւնների՝ չունենալով մի յարմարաւոր ձեռնարկ այդ դպրոցների համար, թէպէտ և կրօնի դասաւութեան համար կան լոյս տեսած բաւականին դասագրքեր, բայց նրանք իրանց ընդարձակ նիւթով և լայն ծաւալով, ոմանք մինչև անդամ իրանց գրաբարախառն լեզուով ու գարձուածքներով, անհամապատասխան են այդ դպրոցներին, ուր այդ առարկայի աւանդման համար սուղ ժամանակ է տուած և ուսանող սանիկների մի մասն էլ տկար է իր մայրենի լեզուի մէջ:

Երկար տարիների մեր ուսուցչական փորձերը պետական դպրոցներում բերին մեզ այն հաստատ համոզման, որ այդ դպրոցների կրօնի դասաւանդութեան համար անհրաժեշտ էր կազմել մի յատուկ դասագիրք, որի մէջ այդ առարկայի աւանդման համար որոշած ժամանակի չափը, աւանդելի նիւթն ու նրա ծաւալը նկատի առնուած լինէին և ամփոփ կերպով բովանդակէր ամենագլխաւոր կրօնական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են ամեն մի հայ աշակերտուհու և աշակերտի համար:

Զեռք զարկելով այս կարեւոր գործին՝ մենք արգէն պատրաստել ենք պետական միջակարդ իգական դպրոցների համար կրօնագիտութեան մի ընդհանուր ձեռնարկ, որի մէջ բոլոր դասարաններում աւանդելի կրօնի նիւթերը—դասընթացները՝ տեղի, ժամանակի և սանիկների պատրաստու-

ալին զնութեայրութ միջնորդ գյոյքաւաճ ում  
ուն մասնական մշտական զարու պայմ և ճառող  
միջնորդ մաքանական մասնական միջնորդ գյոյքաւաճ  
այստեղ պայմանական մասնական բայրութ

թեան համաձայն՝ որոշուած—դասաւորուած են: Առաջին  
երեք գրքոյկներն արդէն լոյս են տեսել. հետզհետէ պիտի  
լոյս տեսնեն և հետևեալները:

Այս գրքոյկը յիշեալ դպրոցների պատրաստական դա-  
սարանների կրօնի նիւթը—դասընթացն է պարունակում:

Ներկայ աշխատութիւնը լաւ ընդունելութիւն գտաւ  
պաշտօնակիցներիս կողմից և ամենակարճ ժամանակում ի  
բար յաջորդեցին ինն տպագրութիւններ: Դա լաւագոյն  
ապացուցն է, որ մեր կազմած դասագիրքը համապատաս-  
խանում է իր նպատակին:

Եղիկիկ աւ. ք. Երզնկեանց.

## ՄԱՍՆ ԱՐԱՋԻՆ

### Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Ր

#### 1. Աղօթքը եւ նրա արտաքին նշանները

Աստուծուն երկիւղածութեամբ դիմել և նրա  
հետ խօսել—կոչւում է աղօթք:

Աղօթքով մենք խնդրում ենք Աստուծուց այն,  
ինչի որ մենք կարիք ունենք. շնորհակալութիւն ենք  
յայտնում Նրան իր ողորմութեան ու տուած բարի-  
քների համար և փառաբանում ենք իր կատարելու-  
թիւնների համար: Այս պատճառով էլ մեր աղօթքնե-  
րը լինում են—1) խնդրողական: 2) շնորհակալական  
և 3) փառաբանական: Բայց յաճախ պատահում է,  
որ մեր հոգու այս բոլոր գգացումները միացած և  
խառնուած են արտայայտում մեր աղօթքների մէջ,  
այսպէս օրինակ՝ աղօթքը երբեմն սկսում է գոհա-  
ցողականով: յետոյ անցնում է փառաբանականի և  
վերջանում է խնդրուածներով. կամ սկսում է փա-  
ռաբանականով, անցնում է գոհացողականի և վերջա-  
նում խնդրուածներով, և այլն:

Աղօթքով մենք դիմում ենք նմանապէս Աստուծ-  
ամօրը, սուրբ հրեշտակներին և սուրբ մարդոց, բայց  
ոչ այնպէս ինչպէս Աստուծուն: Սուրբ Աստուծա-

մօրն և սրբերին դիմելով խնդրում ենք, որ նրանք  
մեզ համար բարեխօս լինեն Աստուծու առաջ:

Մենք աղօթում ենք ոչ միայն մեզ համար, այլև  
ուրիշների՝ թէ կենդանիների և թէ ննջեցեալների  
համար:

Երբեմն լինում են այնպիսի հանգամանքներ, որ  
մարդ չէ կարողանում աղօթել ազատ և յայտնի, որ-  
քան էլ ցանկանար նա: Այդպիսի դէպքերում կարելի  
է գործածել մտաւոր աղօթքներ և այդ լինում է, երբ  
աղօթում է միայն հոգով ու մտքով և չէ արտասա-  
նում իր աղօթքները խօսքերով կամ նշաններով:

Մենք աղօթելիս գործ ենք ածում հետևեալ ար-  
տաքին նշանները: աչքերը դէպի երկինք ենք դար-  
ձնում; գլուխը խոնարհեցնում; ձեռքերը տարածում,  
երկրպագում, ծունկ չոգում, համբուրում սուրբ պատ-  
կերները և վառում նրանց առաջ կանթեղներ ու  
մոմերը Այս նշաններով մենք արտայայտում ենք Աս-  
տուծում մեր անձնուիրութիւնը ստացած բարիքների  
համար և երկիւղածութիւնը նրա մեծութեան առաջ:

Աղօթքի ամենագլխաւոր նշանն է խաչակնքելը:  
Երեսին խաչակնքելը լինում է այսպէս. աջ ձեռքի  
երեք մատները միացնելով՝ նախ դնում ենք ճակատի  
վրայ, յետոյ կուրծքի և ապա ձախ ու աջ թևերի մօտ,  
իսկ վերջն էլ մէջտեղը կուրծքի վրայ: Այս նշանով  
մենք արտայայտում ենք հաւատ դէպի այն, ինչ որ  
Յիսուս Քրիստոս սովորեցը մեզ և ինչ որ արեց Նա  
մեր փրկութեան համար: Խաչակնքելով ցանկանում  
ենք նաև սրբել Սուրբ Խաչի զօղութեամբ մեր միտ-  
քը, զգացմունքը, ցանկութիւնը և գործունէութիւնը:  
Բացի այս խաչակնքելով աղօթքի և առհասարակ ա-  
մեն մի գործ սկսելու ժամանակ, մենք ցոյց ենք

տալիս, թէ յոյս չենք դնում ոչ մեր ուժերի և ոչ  
մարդկանց օգնութեան վրայ, այլ ապահինում ենք միայն  
Աստուծու օգնութեանը, որ մեզ Քրիստոսի Սուրբ  
Խաչի զօրութեամբ հեռու պահէ ամեն տեսակ ձա-  
խորդութիւններից:

## 2. Աղօթքի տեղը, ժամանակը եւ ասելու կարգը

Աստուծ գտնուում է ամեն տեղ. Նա ամեն  
տեղ լում և տեսնում է մեզ: Այս պատճառով կա-  
րելի է աղօթել ոչ միայն Աստուծու անուանը նուիրած  
սուրբ տաճարներում, այլև ամեն տեղ: Քրիստոնեա-  
ներից ոմանք սովորութիւն ունեն օծուած պատկեր-  
ներ պահել տան մէջ որոշեալ տեղը, սենեակների ան-  
կիւններում, երբեմն առանձին պահարաններում, դէպի  
որը դարձնելով իրանց երեսները՝ աղօթում են: Հայերս  
այդ սովորութիւնը չունենք, օծուած պատկերները  
եկեղեցումն ենք պահում իրրե նուիրական առարկայ,  
տունը անյարմար գտնելով:

Սուրբ պատկերները ծառայում են մեզ նրա հա-  
մար, որ նայելով նրանց՝ յիշենք նրանց նախատիպն և  
ուշադրութեամբ ու երկիւղածութեամբ աղօթենք: Այս  
պատկերները, նայելով մեր ջերմեռանդութեան  
և կարողութեան. շատ անգամ զարդարում ենք զա-  
նազան զարդերով և նրանց առաջ վառում ենք կան-  
թեղներ ձիթով ու մեղրամոմեր: Լոյսը, որ վառվում  
է պատկերների առաջ, արտայայտում է մեր հաւատի  
լոյսը և մեր սիրոյ ջերմութիւնը.

Ո՞ւնք Աստուծուց կարող ենք ստանալ բոլոր  
հարկաւոր, բաները մեր կեանքի համար: Նա ամեն  
բոլէ տալիս է իր ողորմութիւնը: Նրա մեծ գործերը

մենք մշտապէս տեսնում ենք. ուրեմն մենք միշտ կարիք ունենք խնդրելու Աստուծուն, շնորհակալութիւն անելու և փառաբանելու Նրան. հետեապէս միշտ պէտք է աղօթենք Նրան: Բայց որովհետեւ շատ ժամանակ է հարկաւոր լինում երկրաւոր կեանքի պիտոյքները հոգալու համար, ուստի աղօթելու որոշեալ ժամերը հետեալներն են. 1) առաւօտեան, երբ քնից զարթնում ենք. 2) օրուայ ընթացքում, այն է գործի՝ (աշխատանքի կամ ուսման) սկսելու և վերջացնելու ժամանակ, հաց ուտելուց առաջ ու վերջը և 3) գիշերը՝ քնելուց առաջ:

Աղօթելիս մենք ուղիղ և երկիւղածութեամբ կանգնում ենք, եթէ պատկեր կայ՝ պատկերի առաջ և եթէ չկայ՝ երեսներս դէպի արևելք դարձնելով, խաչակնքում ենք ուշադրութեամբ և առանց շտապելու ասում մեր աղօթքները: Աղօթքը վերջացնելուց յետոյ դարձեալ խաչակնքում ենք երեսներս և երկրպագութիւն տալիս:

### ԱՂՕԹՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈԾ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՄԱՌՈԾ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՒ

~~Հանուն Հօր և Որդոյ և Հոգոյն  
Սրբոյ: Ամենա:~~

Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով (օգնութեամբ),  
Ամէն:

Այս խօսքերով ենք մենք՝ քրիստոնեաներս՝ սկսում մեր գործը: Արտասանելով սուրբ երրորդութեան

անունը՝ արտայտում ենք մեր հաւատը, որ ամենայն ինչ կամենում ենք գործել Աստուծու օգնութեամբ: Աստուծուն մենք անուանում ենք Հայր, Որդի և Հոգի Սուրբ, որովհետեւ Նա էութեամբ մի է, իսկ անձնաւորութեամբ՝ երեք: Առաջին անձն է Հայր, երկրորդը՝ Որդի և երրորդը՝ Հոգի Սուրբ: Այդ երեք անձինքն ունին մի անուն՝ Աստուծած: Նրանք ունին հաւասար զօրութիւն, պատիւ և կազմում են մի էռութիւն (գոյութիւն): Ամէն խօսքը նշանակում է ճշմարիտ, այդպէս, թոր լինի այդպէս:

X                  և այս  
Սուրբ Աստուծած, Սուրբ և Հզօր, Սուրբ  
և Անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա  
մեղ—(երեք անգամ): X

Սուրբ Աստուծած, Սուրբ և Հզօր (զօրեղ) Սուրբ և Անմահ, որ խաչուեցար մեզ համար, ողորմիր մեզ:

Այս աղօթքը՝ ըստ աւանդութեան՝ ասուած է Քրիստոսի խաչից իջեցնելու ժամանակ, ուստի և ասում է Աստուծու Որդու համար:

Սուրբ և Աստուծած ենք անուանում Նրան, որովհետեւ Նա Աստուծու Որդի է ու ինքն էլ Աստուծած է և չկայ Նրա մէջ ոչինչ մեղը: Հզօր ենք անուանում, որովհետեւ Նա ամենակարող է և յաղթեց մահուան:

Անմահ ենք անուանում, որովհետեւ Նա յաւիտենական է և թէպէտ մարմնով մեռաւ, բայց Աստուծա-

ծութեամբ անմահ է և չօր Աստուծու ու Սուրբ Հոգու հետ էակից:

Այս աղօթքով մենք խնդրում ենք Աստուածորդուց, որ իր խաչի և մահուան արդիւնքով ներէ մեր մեղքերը, մարդէ մեր հոգին և սրբէ մեր սիրտը: Մեղք են անուանում մեր այն խօսքերը, ցանկութիւնները, խորհուրդները ու գործերը, որոնք հակառակ են Աստուծու կամքին:

### 3) Աշօթք Տէրուինսկաւ

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո: Եկեսցէ արքայութիւն Քո: Եղիցին կամք Քո, որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս և մեր թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փըրկեա զմեզ ի չարէ: Զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառը յաւիտեանս: Ամէն:

Մեր Հայր, որ երկնքումն հա, սուրբ լինի Քո անունը: Գայ Քո թագաւորութիւնը: Լինի Քո կամքը՝ ինչպէս երկընքումը՝ այնպէս էլ երկընի վրայ: Մեր ամենօրեայ հացը այսօր էլ տուր մեզ, Մեր պարտքը թող մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք թողնում: Մի ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ պատիր մեզ չարից: Որովհետեւ Քոնն է թագաւորութիւնը և փառքը յաւիտեան: Ամէն:

Այս աղօթքը անուանւում է Տէրունական, ուրովհետև մեր Տէր Յիսուս Քրիստոս սովորեցրեց: Այս աղօթքը սկսում է կոչումնվ. բաղկացած է եօթն խնդրուածներից և վերջանում է փառաբանութեամբ:

Կոչում.—«Հայր մեր, որ յերկինս ես»: Մենք անուանում ենք Աստուծուն Հայր, որովհետև 1) Նա իր ողորմութեամբ մեզ՝ բրիստոնեաներիս՝ որդի անուանեց. 2) Նա մեզ սիրում է ինչպէս հայր և մեր բոլոր բարի գործերում միշտ օգնում է: Մրահամար պէտք է դիմենք նրան սիրով և յոյսով, ինպէս երեխաներն իրանց հօրը:

Մենք Աստուծուն անուանում ենք Երկնաւոր Հայր այն պատճառով, որ նա թէև ամեն տեղ է, բայց իր փառքի աթոռն ունի երկնքում: Բայցի այդ յիշեցնում է մեզ, որ աղօթելիս պէտք է թողնենք երկրային բաները և մտածենք միայն երկնայինի մասին:

Առաջին խնդրուած.—«Սուրբ եղիցի անուն Քո»: Աստուծու անունը միշտ սուրբ է. բայց այս խօսքերով մենք խնդրում ենք, որ նրա անունը սուրբ լինի մեր մէջ էլ: Այս լինում է, երբ մենք Աստուծու խօսքը պահում ենք սուրբ և հետեւով նրան, ապրում ենք մաքուր սրտով: Իսկ ով Աստուծու խօսքին հակառակ է ապրում և սովորեցնում, նա անպատւում է նրա սուրբ անունը իւր մէջ:

Երկրորդ խնդրուած.—«Եկեսցէ արքայութիւն Քո»: Այս խօսքերով մենք խնդրում ենք, որ Աստուծ թագաւորէ մեր սրտի մէջ, որ զգանք, ցանկա-

Նանք ու կատարենք՝ ինչոր Նրան հաճելի է. հաւատանք Նրա սուրբ խօսքին և ապրենք Նրա կամքի համաձայն. լինենք քրիստոնեաներ ոչ միայն անունով, այլև գործով:

Եսը ինդրուած.—«Եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի»: Այս խօսքերովմենք խնդրում ենք Աստուծուն, որ՝ 1) նա օգնէ մեզ կատարելու այս երկրում Նրա սուրբ կամքը այնպէս, ինչպէս հրեշտակները կատարում են երկնքում: 2) հեռացնէ մեղանից չար խորհուրդը ու չար կամքը, որոնք հակառակ են Նրա բարի ու ողորմած կամքին և չեն թողնում մեզ սուրբ պահել Նրա անունը. 3) պատրաստականութիւն ենք յայտնում ստանալու Նրանից այն ամենը, ինչ որ Նրան հաճելի կլինի մեզ տալու համար:

Չորրորդ ինդրուած.—«Զհաց մեր հանապագորդ տուր մեզ այսօր»: Այս խօսքերով մենք խնդրում ենք, որ Աստուած տայ մեզ ամեն օրուայ կարենը պիտոյքները մեր գոյութեան համար՝ 1) մարմնաւոր, օրինակ ուտելիք, հանդերձ, բնակարան, կենդանիներ, ընտանիք, որդիք, հաւատարիմ ծառայ, լաւ եղանակ, առատութիւն, խաղաղ կեանք, առողջութիւն, բարի անուն, լաւ բարեկամներ, հաւատարիմ հարեաններ և այլն. 2) հոգեոր, օրինակ՝ Աստուծու խօսքը և Քրիստոսի Ս. Մարմնի ու Արեան հազորդութիւնը:

Հինգերորդ ինդրուած. — «Եւ թող մեզ ըգպարտիս մեր, որպէս և մեր թողումք մերոց պարտապանաց»: Այստեղ պարտք նշանակում է մեղք: Մենք պարտաւոր ենք կատարում, նշանակում է մուռմ ենք Նրան պարտական. իսկ մեր պարտապաններ անուանւում են այն մարդիկ, որոնք որեւէ բանով մեղաւոր են մեր առաջ: Այս աղօթքով ինդրում ենք, որ նա ողորմածաբար ների մեր մեղքերը, պակասութիւնները և խոստանում ենք մենք էլ մեծահոգութեամբ ներել մեր առաջ մեղաւորներին և բարութիւն անել: Մրանից երեսում է, որ եթէ մենք չներենք, Աստուած էլ մեզ չի ների:

Վեցերորդ ինդրուածք.—«Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն»: Փորձութիւն անուանւում են կեանքի այն դէպքերը, որոնց ժամանակ կարող ենք մենք ընկնել յուսահատութեան, խարէութեան, թերահաւատութեան և ուրիշ վատ ու արատ բերող մեղքերի մէջ: Այս փորձութիւնները առաջ են գալիս մեր մարմնական թուլութիւնից, մարդկանց վատ օրինակներից և գայթակղութիւնից: Մենք խնդրում ենք Աստուծուն, որ նա հեռացնի մեղանից այդպիսի փորձութիւնները: Բայց եթէ Աստուծուն հարկաւոր է փորձութիւններով հաստատել մեր հաւատը և ամրացնել մեզ բարի կեանքի մէջ, այն ժամանակ խնդրում ենք, որ նա օգնէ մեզ յաղթել Նրանց և չընկնել մեղքի մէջ:

Եօթերորդ խնդրուած.—«Այլ փրկեա զմեզ  
ի չարէ»։ Այս խօսքերով մենք խնդրում ենք Աստու-  
ծուն, որ նա ազատէ մեզ ամեն տեսակ չարութիւ-  
նից, ձախորդութիւններից, զժբաղդութիւններից և  
պատահած ժամանակ պաշտպանի մեզ, որ բարի վեր-  
ջաւորութիւն ունենայ։

Փառաբանութիւն.—«Զի Քո է արքայութիւն  
և զրութիւն և փառք յաւիտեանս։ Ամէն»։  
Այս խօսքերով մենք փառաբանում ենք և յոյս ունենք  
ստանալու մեր խնդրուածները, որովհետեւ այսպիսի  
խնդրուածները հաճելի են Նրան և լսելի կը լինեն։  
Նա ինքը պատուիրեց մեզ այսպէս աղօթել և խոս-  
տացաւ լսել մեզ։

#### 4. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ԱՌԱՋ

Ամենաբարի Աստուած, առաքեա առ  
մեզ զշնորհս Հոգւոյդ Քո սրբոյ, զի պարզենեցէ  
մեզ զմիտս և կազզուրեսցէ զզօրութիւնս  
հոգւոց մերոց, որպէս զի մեր ընդունելով  
զաւանդեալ մեզ ուսմունա, զարգացուք Քեզ  
ստեղծողիդ մերում ի փառս, ի միխթա-  
րութիւն ծնողաց մերոց, յօգուտ եկեղեցւոյ  
և հայրենեաց։

~~Կայ~~ Ամենաբարի Աստուած, ուղարկիր մեզ Քո սուրբ Հոգու  
շնորհը, որ մեզ միտք տայ և զօրացնէ մեր հոգեսր կարո-  
ղութիւնները, որպէս զի մենք ընդունելով մեզ տուած ու-  
սումը, մեծանանք Քեզ ստեղծողիդ փառք տալու, մեր ծնող-  
ներին միխթարելու և եկեղեցուն ու հայրենիքին օգտա-  
կար լինելու։ ~~Կայ~~

Այս աղօթքով մենք Աստութիւն անուանում ենք  
ամենաբարի, որովհետեւ Նա մեզ համար միշտ բարի  
է ցանկանում և 1) խնդրում ենք, որ նա ուղարկէ  
մեզ շնորհք, այն է՝ Սուրբ Հոգու ոյժ, 2) խոստովա-  
նում ենք, որ Սուրբ Հոգու շնորհը տալիս է հոգեսր  
զօրութիւն, այն է՝ միտք, յիշողութիւն, ուշադրութիւն  
և զօրացնում է նրանց, որոնք հարկաւոր են մեզ ուս-  
ման ժամանակ և 3) յայտնում ենք, թէ մենք ուսում  
ենք առնում և մեծանում, որ մեր բարի գործերով  
մեր Ստեղծողին փառք տանք, մեր ծնողներին միխ-  
թարենք և մեր եկեղեցուն ու հայրենիքին օգուտ  
բերենք։

3/029-6

#### 5. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ՅԵՏՈՅ

Գոհանամք գթէն, Արարիչ, զի արժանի  
արարեր զմեզ շնորհաց Քոց՝ ընդունելու-  
թեան ուսմանս։ Օրհնեա զմեծաւորս, զծնո-  
ղըս և զուառցիս մեր, որք առաջնորդեն  
մեզ ի գիտութիւն բարութեան և տնկր մեզ  
կարողութիւն ի շարունակութիւն ուսմանս  
այսորիկ։



Շնորհակալ ենք Քիզանից, Արարիչ, որ Քո սուրբ շնորհով արժանացրիր մեզ ուսում ստանալու: Օրհնիր մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ բարի բաներն իմանալու: Եւ տուր մեզ կարողութիւն շարունակելու այս ուսումը:

Այս աղօթքով մենք դառնում ենք գէպի մեր Արարիչ Աստուածը և շնորհակալութիւն ենք յայտնում նրան, որ իր ողորմութեամբ մեզ արժանացրեց ու սում ստանալու: Ապա խնդրում ենք, որ 1) Նա օրհնի մեր մեծերին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք օգնում են մեր ուսման և առաջնորդում են մեզ գէպի բարին, և 2) տայ մեզ ոյժ ու կարողութէւն, որպէս զի այսուհետեւ էլ շարունակենք մեր ուսումը:

6. ԱՂՈԹՔ ՃԱՇԻՑ ԱՌԱՋ

Աշք տմենեցուն ի Քեզ, Տէր, յուսան և Դու տաս զկերակուր նոցա ի ժամու. բանաս զձեռն Քո և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք Քովք:

Ամենքի աչքերը, Տէր, գէպի քեզ ես նայում և Դու տալիս ես նրանց կերակուր ժամանակին. բաց ես անում Քո ձեռքը և լիացնում ես ամենքին Քո ողորմութամբ:

Այս աղօթքով մենք դարձնում ենք մեր աչքերը Աստուծուն, խոստովանում՝ և ընդունում ենք, որ Նա մեր Տէրն է և ինչպէս հայր, ամեն ժամանակ հոգում էմեր մարմական կերակրի մասին: Ընդունում ենք

նաև, որ Նա ողորմած է և ամենքին իր ողորմութեամբ տալիս է այն, ինչ որ հարկաւոր է:

7. ԱՂՈԹՔ ՃԱՇԻՑ ՅԵՏՈՅ

Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց Քոց: Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Զլիութիւն սեղանոյս անհատ և աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց և լիացոյց՝ նմա փառք յաւիտեանս. Ամէն:

Տէր Յիսուս, լիացանք Քո բարութեամբ: Շնորհակալ լինենք մեր Տէր Աստուծուց—Հօրից, Որդուց և Սուրբ Հոգուց: Մեր Քրիստոս Աստուած, որ մեզ կերակրեց և լիացրեց, թռա անպակաս անէ այս սեղանի լիութիւնը: Նրան է վայելում փառք յաւիտեանս. Ամէն:

Այս աղօթքով մենք նախ՝ շնորհակալութիւն ենք անում մեր Տէր Յիսուս Քրիստոսին այն բանի համար, որ Նա մեզ կերակրեց իր երկրաւոր բարիքներով և ապա շնորհակալութիւն անելով և փառք տալով սուրբ Երրորդութեանը՝ խնդրում ենք, որ միշտ անպակաս անի մեղանից իր ողորմութիւնը:

8. ԱՂՈԹՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Քրիստոս յարեաւ ի մեսելոց՝ մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեղ

զկեանս ոլարգենեաց, նմա փառք յաւիտեանս  
Ամէն:

Քրիստոս յարութիւն առաւ մեռելներից, իր մահով  
մահուան յաղթեց և իր յարութեամբ մեղ կեանք առւեց.  
Նրան յաւիտեանական փառք. Ամէն.

Այս աղօթքով մենք խոստովանում ենք և ըն-  
դունում, որ 1) Քրիստոս յարութիւն առաւ մեռել-  
ներից, այսինքն՝ թէկ նա մեռաւ մարմնով, բայց  
երրորդ օրը յարութիւն արաւ, և 2) նա իր մեռնե-  
լով մահը ոչնչացրեց և ցոյց տուեց, որ մենք ևս  
յոյսով մեռնելով, դարձեալ պէտք է կենդանանանք,  
յարութիւն առնենք և դրանով նա մեղ նոր կեանքի  
արժանացրեց:

#### 9. ԱՂՕԹՔ ԹԱԳԱԽՈՐԻ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած մեր, կեց՛ զամենաբարե-  
պաշտ Թագաւորն և զկայսրն ամենայն  
Ռուսաց զնիկօլայ Ալէքսանդրովիչն: Զօրաց՛  
զնա, օգնեա զաւակաց և զօրաց նորա՞պա-  
հելով զամենեսին ի խաղաղութեան:

Տէր Աստուած մեր, կեանք տուր ամենաբարեպաշտ  
Թագաւորին և ամենայն Ռուսաց Կայսր Նիկօլայ Ալէքսանդ-  
րովիչին: Զօրացրու Նրան, օգնիր Նրա զաւակներին և զօր-  
քերին և ամենքին պահպանիր խաղաղութեան մէջ:

Այս աղօթքով մենք խնդրում ենք մեր Տէր Աս-  
տուածուն, թագաւորների Թագաւորին, որ նախ կեանք

առայ ամենայն Ռուսաց ամենաբարեպաշտ Թագաւոր-  
կայսր Նիկօլայ Ալէքսանդրովիչին. երկրորդ՝ զօրացնի  
Նրան իր թշնամիների գէմ. երրորդ՝ օգնի Նրա զա-  
ւակներին և զօրքերին և չորրորդ՝ Նրա հովանաւո-  
րութեան տակ գտնուած բոլոր ժողովրդին պահպանի  
խաղաղութեան մէջ:

#### 10. ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Անկանիմք առաջի Քո, սուրբ Աստուա-  
ծածին և աղաշեմք զանարատ զԿոյսդ: Բա-  
րեխօսեա վսան անձանց մերոց և աղաշեա  
զՄիածին Որդիդ, փրկել զմեղ ի փորձու-  
թիւնէ և յամենայն վտանգից մերոց:

Հնկնում ենք Քո առաջ, սուրբ Աստուածածին և աղա-  
շում ենք անարատ Կուսիդ: Բարեխօսիր մեղ համար և խըն-  
դրիր Քո Միածին Որդուն, որ փրկի մեղ փորձանքից և  
ամեն տեսակ վտանգներից:

Այս աղօթքի մէջ մենք սուրբ Կոյս Մարիամին  
անուանում ենք՝ 1) Աստուածածին, որովհետեւ նա  
ծնաւ Յիսուսին, որ էր Աստուած և մարդ. անարատ,  
որովհետեւ նա սուրբ էր ու մեղը չունէր. 2) ընկնելով  
և երկըրպագելով Նրան՝ խնդրում ենք, որ բարեխօսի  
մեղ համար և աղաշի իր Միածին Որդուն, որ փրկի  
մեղ ամեն տեսակ փորձանքներից և մեղ վրայ գալիք  
վտանգներից. 3) Միածին ենք անուանում Յիսուսին,

որովհետև Աստուած բացի Նրանից ուրիշ որդի չունի ըստ էռթեան, ինչպէս սուրբ Կոյս Մարիամն էլ ուրիշ որդի չունի ըստ մարդկութեան:

11. ԱՂՈԹՔ ԱՌԱԽՈՏԵԱՆ

Գոհանամք զՔէն, Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեղ ի հանգստենէ ընոյ շնորհիւ ողորմութեան Քո: Զարթն զմիտս մեր արդարութեամբ առ Քեզ, Տէր Աստուած մեր, զի տեսցեն աշք մեր զփրկութիւն Քո, եկեսցէ և ընակեսցի առ մեղ Աստուածութիւն Քո և ողորմութիւն Քո հովանի և պահպան լիցի ի վերայ պաշտօնէից Քոց: Եւ զմեղ՝ զծառայսս Քո արժանի արա ի տուէ և ի զիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ ի սէր պատուիրանաց Քոց և զոհանալով փառաւորել զչայր և Որդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Շնորհակալ ենք Քհզանից, Տէր Աստուած մեր, որ Քո ողորմութեան շնորհիւ զարթեցիր մեղ քնած տեղից: Զարթեցրու մեր միտքը արդարութեամբ գէպի Քեզ, Տէր Աստուած մեր, որ մեր աչքերը տեսնեն Քո փրկութիւնը, գայ և ընակուի մէջ Քո Աստուածութիւնը և Քո ողորմութիւնը հովանի և պահպան լինի Քո ծառաների վրայ, եւ

մեղ՝ ծառաներիս էլ արժանի արա զիշեր ու ցերեկ և ամեն ժամանակ Քո պատուիրանների վրայ մտածել ու շնորհակալութեամբ փառաւորել Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և յաւիտեանս. Ամէն:

Այս աղօթքով մենք շնորհակալութիւն ենք յայտնում մեր Տէր Աստուածն, որ Նա իր ողորմութեամբ զարթեցրեց մեղ քնից. և ինդրում ենք, որ 1) Նա զարթեցնի մեր մատաւր աչքերն էլ, որ տեսնենք Նրա մեղ տուած բարիքներն ու ողորմութիւնը. 2) մաքուր պահենք մեր սիրաբ, որ Աստուած գայ և քնակուի նրա մէջ և տեսմելով մեր բարի գործերը՝ ողորմի ու պահպանի մեղ ամեն տեսակ փորձանքներից և 3) միտք, կարողութիւն ու շնորհը տայ մեղ, որ ամեն ժամանակ Նրա պատուիրանները աչքի առաջ ունենանք ու կատարենք և հասկանալով մեր որդիական պարտականութիւնները՝ փառը տանք և շնորհակալ լինենք Նրանից:

12. ԱՂՈԹՔ ԵՐԵԿՈՑԵԱՆ

Տէր Աստուած մեր, Գու պահեա զմեղ խաղաղութեամբ ի զիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի. ընդ սուրբ երկիւղ Քո բնեուիալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր, որպէսպի յամենայն ժամ Քե պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն և Քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ

և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Տէր Աստուած մեր, Դու պահիր մեզ խաղաղութեամբ այս գիշեր և ամեն ժամանակ: Քո սուրբ երկիւղիդ մէջ հաստատ պահիր մեր միտքը և խորհուրդը, որ ամեն ժամանակ անփորձ և աղատ լինենք թշնամու որոգայթից: Եւ Քեզ—Հօրդ, Որդուդ և Սուրբ Հոգուդ—տանք օրհնութիւն և փառք այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Այս աղօթքով մենք Աստծուն Տէր անուանելով, խնդրում ենք, որ 1) մեզ խաղաղութեան մէջ պահի թէ գիշեր և թէ ամեն ժամանակ. 2) մեր միտքը և խորհուրդը իր սուրբ երկիւղի մէջ պահի, որ կարողանանք անվտանգ պահպանուել թշնամու որոգայթից և 3) խոստանում ենք միշտ օրհնութիւն և փառք տալ Սուրբ Երրորդութեան:

### Ե Ր Կ Ր Ո Ր Գ Մ Ա Ս Ը

ԳԼԽԱԻՈՒ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐԸ

1. ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ ԿՈՒՈՒ ԾՆՈՒՆԴԸ

Նազարէթ քաղաքում կենում էին երկու բարեպաշտ ամուսիններ՝ Յովակիմ և Աննա: Երկուսն էլ Պաւթի ցեղից էին: Նրանք որդի չունէին և այս բանը շատ էր տրամեցնում նրանց: Այս պատճառով նրանք իրանց ա-

դօթքի մէջ խնդրում էին Աստուծուն, որ մի որդի տայ և ուխտ դրեցին՝ եթէ Աստուած կատարի նրանց խնդիրը, ընծայեն նրան Աստուծուն: Աստուած լսեց նրանց աղօթքը և տուեց մի աղջիկ: Նրան անուանեցին Մարիամ: X

Այս տօնը կատարում է սեպտ. 8-ին:

2. ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ՀԻՆՉԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ

Երբ Սուրբ Կոյս Մարիամ երեք տարեկան դարձաւ, ծնողները տարան նրան Երուսաղէմ՝ Աստուծուն ընծայելու: Քահանայապետն ընդունեց նրան և օրհնեց: Տաճարի շուրջը շատ բնակարաններ կային, որտեղ կենում էին բարեպաշտ այրիներ, կոյսեր և Աստուծուն նուիրուած մանուկներ: Այստեղ Յովակիմ և Աննան թողին Մարիամին: Մարիամը մեծանում էր և պարապում էր աղօթքով, Սուրբ Գիրքը կարդալով և ձեռագործով: X

Այս տօնը կատարում է նոյեմբերի 21-ին:

X ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԱԿԵՏՈՒՄԸ

Սուրբ Կոյս Մարիամը դեռ տաճարումն էր, որ նրա ծնողները վախճանուեցան: Նա

մնաց որբ: Երբ նա 14 տարեկան դարձաւ,  
նրա գաստիարակները կամեցան նրան ա-  
մուսնացնել բայց նա առաց, որ ուխտել է  
Աստուծուն միշտ կոյս մնալ: Այն ժամանակ  
րահանաները յանձնեցին նրան իր աղքական  
ծերունի Յովսէփին, որին յայտնեցին և  
Սուրբ Կոյս Մարիամի ուխտը:

Ծերունի Յովսէփը հիւն էր և բնակուում  
էր Գալիլիայի նազարէթ քաղաքում: Սուրբ  
Կոյս Մարիամը զնաց նրա տուն և բնա-  
կուեց այնտեղ:~~×~~

~~Մի~~ անգամ, երբ Սուրբ Կոյս Մարիամը  
աղօթում էր, Գաբրիէլ հրեշտակապետն ե-  
րեաց նրան և ասաց. «Ուրախացիր Մարիամ,  
Տէրը քեզ հետ է. օրհնուած ես դու կանանց  
մէջ: Սուրբ Հոգին կգայ քո վերայ և Բարձ-  
րեալի (Աստուծու) գօրութիւնը պաշտպան  
կըլինի քեզ: Դու Որդի կունենաս եւ կանուանես  
նրան Յիսուս: Նա կը լինի Մեծ և Բարձր-  
եալի Որդի կըկոչուի: Աստուած կըտայ նը-  
րան Դաւթի աթոռը և նրա թագաւորու-  
թիւնը վերջ չի ունենայ: Սուրբ Կոյս Մա-  
րիամը խոնարհութեամբ պատասխանեց.  
«Թո՞ղ ալդպէս լինի»: Հրեշտակը հեռացաւ:

Այս տօնը կատարուում է ապրելի 7-ին

4. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

~~×~~ Քրիստոսի ծննդեան ժամանակ Օգոստոս  
կայսրը կամեցաւ աշխարհագիր անել: Նա  
հրամայեց, որ իւրաքանչիւր հրէայ զնայ իր  
հայրենի քաղաքը: Յովսէփը և Սուրբ Կոյս  
Մարիամը, որ Դաւթի ցեղից էին, գնացին  
նազարէթից Բեթղեհէմ: Նրանք քաղաքի մէջ  
իջնելու տեղ չգտան և բնակուեցան մի այրի  
մէջ, որտեղ հովիւները պահում էին իրանց  
ոչխարները ցուրտ և անձրեալին եղանակ-  
ներին: Այդ ալրի մէջ գիշերը Սուրբ Կոյս  
Մարիամը ծնաւ իր Միածին Որդի Յիսու-  
սին: Նա վաթաթեց նրան խանձարուում  
և զրեց մասուրի մէջ: ~~×~~

~~Այդ~~ զիշերը Բեթղեհէմցի հովիւները պա-  
հում էին իրանց ոչխարները գաշտում: Տի-  
րոջ հրեշտակն երեաց նրան և ասաց. «Մի  
վախենաք, ես աւետում եմ ձեզ միծ ուրա-  
խութիւն. Դաւթի քաղաքի մէջ ձեզ համար  
Փրկիչ ծնաւ: Եւ այս կըլինի ձեզ նշան, դուք  
կըգտնէք Մանուկին խանձարուում վաթա-  
թած և մասուրի մէջ զրած»: Այդ միջոցին  
յանկարծ շտու հրեշտակներ երեսցան երկն-

քում և սկսեցին երգել. «Փառք Աստծուն  
երկնքումը. երկրի վրայ խաղաղութիւն և  
մարդկանց մէջ ուրախութիւն»: Երբ հրեշ-  
տակները վերացան երկինք, հովիւները գը-  
նացին և ինչպէս հրեշտակն ասել էր, գտան  
Մանուկին խանձարուրում փաթաթած և  
մսուրի մէջ դրած: Երկրպագութիւն տուին  
ու յետ դարձան: X

Այս տօնը կատարւում է Յունուարի 6-ին:

### 5. ՏԵԱՐՆՀԵՐԱՐԱՋ

X Հրէաները Մովսէս մարգարէի օրէնքով  
իրանց արու անգրանիկ զաւակներին ծնըն-  
դից յետոյ՝ քառասներորդ օրը, տանում էին  
Երուսաղէմի տաճարը, որ Տիրոջը ներկայաց-  
նեն: Նրանք այս պարտաւորութիւնը կատա-  
րելիս մատուցանում էին զոհ. հարուստները՝  
արջառ կամ գառը, իսկ աղքատները՝ մի  
զոյգ տատրակ կամ աղաւնի:

Երբ Յիսուս քառասուն օրական դար-  
ձաւ, Մարիամ Սուրբ Կոյսը և Յովսէֆը տա-  
րան Նրան Երուսաղէմի տաճարը: Նրանք  
իրանց հետ վերցրին մի զոյգ աղաւնի: Այդ  
միջոցին Երուսաղէմում կենում էր մի ծե-

րունի արդար մարդ՝ Միմէօն անունով: Սուրբ  
Հոգին յայտնել էր Նրան, որ նա չի մեռնիլ  
մինչև Քրիստոսին շտեսնի: Երբ Մանուկին  
բերին տաճարը, Միմէօնը Սուրբ Հոգով իմա-  
ցաւ: Նա դուրս եկաւ Մանուկի առաջ, գիրկն  
առաւ Նրան, վառք տուեց Աստուծուն և  
ասաց. «Տէր, այժմ Քո խօսքիդ համեմատ  
արձակիր Քո ծառայիդ, որովհետև իմ աշ-  
քերը տեսան Փրկչին, Որին պատրաստեցիր  
Ժողովրդի համար»: Յովսէփը և Մարիամը  
գարմանում էին այս խօսքերի վրայ: Տաճա-  
րում կար և մի կին՝ Ըննա անունով: Նա  
մարգարէուհի էր: Սա էլ վիառաբանում էր  
Աստուծուն և ամենին ասում, թէ այս մանուկը  
խոստացեալ Փրկչին է: X

Այս տօնը կատարւում է Փետրուարի 14-ին:

### ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յորդանան գետի ափի մօտ բնակւում  
էր մի մարգարէ՝ Յովհաննէս անունով: Նա  
քարոզում էր Ժողովրդին և ասում. «Ապաշ-  
խարեցէք, մօտեցել է երկնքի արքայութիւնը  
(Քրիստոս)»: Նրա մօտ գալիս էին ամեն  
կողմից մարդիկ և իրանց մեղքերը խոստո-

վանում էին. Յովհաննէսը մկրտում էր նը-  
րանց Յորդանանի մէջ:

Երբ Յիսուս երեսուն տարեկան դարձաւ,  
Նազարէթից եկաւ Յովհաննէսի մօտ մկրտ-  
ուելու: Յովհաննէսը հրաժարուեց նրան  
մկրտելուց և ասաց. «Ես պէտք է Քեղանից  
մկրտուեմ, Դու ինձ մօտ ե՞ս գալիս»: Բայց  
Յիսուս պատասխանեց. «Թոյլ տուր, որով-  
հետեւ այսպէս պէտք է կատարուի ամեն  
արդարութիւն», այսինքն՝ դու պէտք է  
մկրտես ինձ: Յովհաննէսը թոյլ տուեց: Երբ  
Յիսուս մկրտուեց, երկինքը բացուեց և Սուրբ  
Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ նրա  
վրայ: Երկնքից էլ ձայն լսուեց, թէ «Դա է  
իմ սիրելի Որդին, Որին ես հաւանեցի»:

Այս տօնը կատարում է Յունվարի 6-ին:

7. ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Յիսուս կամեցաւ ցոյց տալ իր Աստուա-  
ծալին փառքը իր աշակերտներին: Նա վեր  
առաւ իր հետ Փետրոսին, Յակոբոսին և  
Յովհաննէսին, բարձրացաւ թափոր լեռար և  
սկսեց աղօթել: Աշակերտները յոգնած լինե-  
լով՝ քնեցան: Երբ զարթեցան, տեսան, որ

իրանց վարդապետը կերպարանափոխուել է:  
Նրա երեսը փայլում էր ինչպէս արեգակն և  
շորերն սպիտակ էին ինչպէս ձիւն. Նրա հետ  
խօսում էին Մովսէս և Եղիա մարգարէները:  
Պետրոսը հիացած այս րանից՝ բացական-  
չեց. «Վարդապետ, լաւ է մեզ այստեղ լի-  
նել. Չինէնք երեք տաղաւար, մինը՝ Քեզ,  
մինը՝ Մովսէսին և միւսը՝ Եղիալին»: Այն  
ժամանակ մի լուսաւոր ամպ եկաւ և հովանի  
եղաւ նրանց: Զայն եկաւ ամպից, որ ա-  
սում էր. «Դա է իմ սիրելի որդին, Դրան  
լսեցէք»: Աշակերտներն այս ձայնից սաստիկ  
վախեցան և վայր ընկան երեսների վրայ:  
Յիսուս մտեցաւ նրանց, զարթեցրեց և  
ասաց. «Կանգնեցէք և մի վախենաք»: Նը-  
րանք բարձրացրին իրանց զլուխներն և  
տեսան միայն Յիսուսին իր սովորական կեր-  
պարանքով:

Այս տօնը կատարում է ամառը՝ յունիս կամ յուլիս  
ամսին՝ կերպակի օր:

8. Ծ Ա Ղ Կ Ա Զ Ա Ր Դ

Հըէամերն ամեն տարի կատարում էին  
Եղիպտոսից գուրս գալու տօնը, որ կոչւում

էր Պասէք: Այդ տօնից վեց օր առաջ Յիսուս եկաւ Բեթանիա գիւղը և այնտեղից ճանապարհ ընկաւ դէպի Երուսաղէմ: Նրա յետեից գնում էր մեծ բազմութիւն: Երբ նա հասաւ Զիթենեաց սարը, հրամայեց իր աշակերտներից Երկուսին, որ մօտակայ գիւղից մի աւանակ բերեն: Աշակերտները բերին աւանակը, փուեցին նրա վրայ իրանց շորերը և Յիսուս նստեց: Աատերը հաւատացին, որ Յիսուս Դաւթի ցեղից խոստացած Փրկիչն է և սկսեցին պատուել նրան: Ոմանք արմաւենու ճիւղեր էին կտրում և ճանապարհի վրայ ձգում. ոմանք էլ իրանց շորերը աւանակի ոտքերի տակն էին փուռմ և այս երգն երգում, «Ո՞վսաննա Դաւթի Որդուն, օրհնուած է Տիրաց անունով Եկող Թագաւորը, ովսաննա բարձումը»:

Քաղաք մտնելու ժամանակ մեծ բազմութիւն գուրս նկաւ Քրիստոսի առաջ և ով նրան շէր տեսել, հարցնում էր. «Ո՞վ է Սա»: Փողովուրդը պատասխանում էր. «Սա Յիսուս է—Նազարէթ քաղաքի Մարգարէն»:

Այս տօնը կատարում է Զատկից մի շաբաթ առաջ:

9 ԱԻՍԳ ՀԻՆԿԾԱԲԹԻ

Քաղաքակերաց տօնի առաջին օրը՝ Յիսուս իր աշակերտներից Երկուսին ասաց, որ Երուսաղէմում մի տան մէջ պատրաստութիւն տեսնեն Զատիկը տօնելու համար: Աշակերտները պատրաստեցին, ինչպէս Յիսուս հրամայել էր:

Երեկոյեան Յիսուս իր աշակերտներով մտաւ պատրաստած վերնատունը: Նա ընթրիքից առաջ իր աշակերտների ոտքերը լուաց՝ խոնարհութեան օրինակ տալով նըրանց: Յետոյ նստեց սեղան նրանց հետ և կերաւ գատկական գառը: Խօսակցութեան ժամանակ Յիսուս ասաց իր աշակերտներին. «Զեղանից մէկը պէտք է մատնէ Ինձ»: Աշակերտները տարակուսած նայեցին իրար երեսի և սկսեցին Երկիւղով մէկ մէկ հարցնել. «Միթէ ես եմ, Տէր»: Յուղան էլ, որ պէտք է մատնէր, հարցրեց. «Միթէ ես եմ»: Յիսուս պատասխանեց: «Դու ես»: Յուղան իսկոյն գուրս վնաց:

Ընթրիքն ուտելիս Յիսուս վերցրեց հաց, օրհնեց, կտրեց և տուեց աշակերտներին ու

ասաց. «Առէք, կերէք, այս է իմ մարմինը: Այս արէք իմ յիշատակի համար»: Յետոյ վերցրեց բաժակը, գոհացաւ և տուեց նրանց ու ասաց. «Խմեցէք դրանից ամենքդ. այս է իմ՝ Նոր-ուխտի արինը, որ շատերի մնղերի թողոթեան համար թափում է: Ամեն անգամ երբ խմէք այս բաժակից, յիշեցէք ինձ»:

Այսպէս հաստատեց Յիսուս հաղորդութեան սուրբ խորհուրդը:

*Այս տօնը կատարում է Զատկից երեք օր առաջ:*

#### 10. ՅԻՄԱՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Զատկի տօնից մի քանի օր առաջ Յիսուս եկաւ Երուսաղէմ: Նրա թշնամիները—հրէաների քահանուատետները, դպիրները և ժողովրդը ծերերը-հաւաքուեցին և խորհուրդ արին, որ սպանեն նրան: Բոնեցին Յիսուսին և տարան Փիղատոսի մօտ, որ երկրի կտուավարիչն էր և սկսեցին քամբասել ու շարախօսել նրա մասին, թէ նա քարոզում և մոլորեցնում է ժողովրդին, իրան Աստուծու Որդի է անուտնում և արգելում է հարկ տալ Կայսեր: Փիղատոսը հրամայեց խաչել Յիսուսին:

Զինուորները տարան Յիսուսին Գողգոթա: Հանեցին նրա շորերը և խաչեցին: Նրա աջ ու ձախ կողմն էլ խաչեցին երկու աւագակներ: Յիսուսի խաչի վրայ գրուած էր. «Յիսուս նազովրեցի Թագաւոր Հրէից»: Ամենը ծաղրում էին նրան, բայց նա աղօթում էր խաչի վրայ, որ Աստուծ ների նրանց արածը:

Երբ Յիսուսին խաչեցին, առաւօտեան ժամը ինն էր: Տասներկու ժամին երկրիս երեսը խաւար պատեց և աստղերն երևացին: Ժամը երեքին Յիսուս աղաղակեց: «Աստուծ իմ, Աստուծ իմ, ինչու թողեցիր ինձ»: Մի փոքր ժամանակից յետոյ էլ ասաց. «Ժարաւ եմ»: Զինուորներից մէկը սպունգը թաթախեց քացախի մէջ և եղեգի ծայրով մօտեցրեց նրա բերանին: Յիսուս քացախն ընդունեց և ասաց. «Հայր, Քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին»: Յետոյ գլուխը խոնարհեցրեց և աւանդեց հոգին:

Այդ ժամանակ արեգակը խաւարեց, Երկիրը շարժուեց և տաճարի վարագոյրը պատառուեց: Ներկայ եղող հարիւրապետը և

ժողովուրդը տեսնելով այս՝ ասացին. «Արդարեւ Սա Աստուծու Որդի էր»:

Այս տօնը կատարում է Աւագ Ռոբերտ օրը:

11. ՅԻՍՈՒՍԻ ԹԱՀՈՒՄԸ

Յովսէփ Սրեմաթացին, որ Յիսուսի ծածուկ աշակերտն էր, եկաւ Պիղատոսի մօտ և խնդրեց, որ թոյլ տայ իրան Յիսուսի մարմինը խաչից իջեցնել ու թաղել: Պիղատոսը երբ ստուգեց, որ Յիսուս մեռել է, թոյլ տուեց:

Գողգոթա եկաւ Նիկողիմոսն էլ, որ նոյնպէս Յիսուսի ծածուկ աշակերտն էր: Յովսէփը պատրաստեց մաքուր կտաւ, իսկ Նիկողիմոսը բերեց հարիւր լիտրի չափ անուշահոտ իւղ: Գողգոթայի մօտ Յովսէփը ունէր մի պարտէզ և այդ պարտէզի մէջ կար մի այր: Յովսէփը և Նիկողիմոսը իջեցրին խաչից Յիսուսի մարմինը, օծեցին և պատեցին կտաւով ու դրեցին այրի մէջ: Իսկ գերեզմանի դուռը ծածկեցին մի մեծ քարով ու գնացին:

Հրէաների քահանայապետներն եկան Պիղատոսի մօտ և խնդրեցին զինուորներ

կանգնեցնել Յիսուսի գերեզմանի մօտ, որ պահպանեն գերեզմանը, որպէսզի Յիսուսի աշակերտները գիշերը չը գողանան Նրա մարմինը և չը տարածեն ժողովրդի մէջ, թէ Նա յարութիւն առաւ: Պիղատոսը հրամայեց զգուշանալ: Նրանք գնացին, կնքեցին գերեզմանի քարը և պահապաններ կանգնեցրին:

Այս տօնը կատարում է Աւագ-Ռոբերտ օրը:

12. ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ—ԶԱՏԻԿ

Կիրակի առաւօտեան վաղ Քրիստոսի գերեզմանի մօտ մի մեծ շարժ եղաւ: Տիրոջ հրեշտակն երկնքից իջաւ, գերեզմանի քարը մի կողմը զլորեց և նոտեց Նրա վրայ: Նրա երեսը փայլակի նման էր և շորերը ձիւնի նման սպիտակ: Այդ ժամանակ Յիսուս յարութիւն առաւ մեռելներից: Պահապանները տեսնելով այս՝ երկիւղից գետին ընկան—ինչպէս մեռածներ: Եւ երբ ուշի եկան, գնացին, պատմեցին, ինչ որ պատահել էր:

Այդ ժամանակ Գալիլիայի կանայր—Մարիամ Մագդաղենացին, Մարիամ Յակովբեանը, Սողոմէն և ուրիշները՝ եկան Յիսուսի գերեզմանի մօտ, որ օծեն Նրա մարմինը:

Նրանք մտան պարտէզ և տեսան, որ քարը  
գլորած է գերեզմանից: Մարիամ Մագդաղի-  
նացին երկիւղից վազեց քաղաք և պատմեց  
Յիսուսի աշակերտներին: Միւս կանայք մո-  
տեցան այրին և տեսան երկու հրեշտակ,  
որոնք աւետեցին, թէ Քրիստոս յարութիւն  
առաւ մեռելներից:

Այս տօնը կատարւում է Զատկին:

### 13. ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Քրիստոսի յարութեան քառասներորդ  
օրը՝ աշակերտները հաւաքուեցան վերնատան  
մէջ: Քրիստոս վերջին անգամ երեաց նրանց  
և ասաց. «Դուք երուսաղեմից չը հեռանաք.  
այլ սպասեցէք Ա. Հոգու գալստեան: Նա մի  
քանի օրից յետոյ կիշնի ձեր վրայ և դուք  
կտանաք զօրութիւն վկայելու իմ մասին»: Այս  
ասելով տարաւ նրանց Զիթենեաց սարը  
և այնտեղ պատուիրեց զնալ բարողել ժո-  
ղովրդին և մկրտել «Յանուն Հօր և Որդոյ  
և Հոգոյն Սրբոյ»: Ապա բարձրացնելով իր  
ձեռքերը՝ օրհնեց նրանց և համբարձաւ եր-  
կինք: Աշակերտները երկրպագութիւն տուին  
և ուրախութեամբ յետ դարձան երուսաղէմ:

Այս տօնը կատարւում է Զատկից 40 օր յետոյ:

### 14. ՀՈԳԵԳԱԼՈՒՏ

Քրիստոսի Համբարձումից յետոյ աշա-  
կերտները մասցին երուսաղէմում: Նրանք  
ժողովուած էին միասին վերնատան մէջ. անց  
էին կացնում իրանց ժամանակը պահքով ու  
աղօթքով և անհամբերութեամբ սպասում էին  
մխիթարիչ Սուրբ Հոգուն: Զատկից յետոյ,  
յիսուներորդ օրը, առաւօտեան ինն ժամին՝  
յանկարծ լսուեց մի ձայն սաստիկ հողմի  
նման և լցրեց բոլոր տունը: Աշակերտների  
խրաքանչիւրի զլսին հրեղէն լիզուներ երե-  
ւեցան և ամենքը լցուեցին Ս. Հոգով ու  
սկսեցին խօսել զանազան լեզուներով: Այս-  
պէս Ս. Հոգին իջաւ նրանց վրայ և տուեց  
զօրութիւն ու շնորհք բարողելու և բժշկելու:

Այս տօնը կատարւում է 10 օր Համբարձումից յետոյ:

### 15. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

Սուրբ Կոյս Մարիամը 16 տարի ապրեց  
Յիսուսի Համբարձումից յետոյ: Նա բնակւում  
էր երուսաղէմում Յիսուսի սիրելի աշակերտ  
Յովհաննէսի մօտ: Մեռնելուց առաջ նա  
ցանկացաւ տեսնել Յիսուսի աշակերտներին,  
որոնք դնացել էին զանազան երկիրներ՝ քա-

րից մէկն էր, եկաւ Հայաստան՝ Եղեսիա  
քաղաքը Աբգարի մօտ:

Նա բժշկեց Աբգարին և քարոզեց քրիս-  
տոնէական հաւատոր: Աբգար թագաւորը և  
Եղեսիա քաղաքի բոլոր բնակիչներն ընդու-  
նեցին քրիստոնէութիւնը և մկրտուեցան:

Աբգարի մահից յետոյ թագաւոր դարձաւ  
նրա քրոջ որդի Սանատրուկը: Սա ուրացաւ  
քրիստոնէութիւնը և սկսեց հալածել ու նա-  
հատակել քրիստոնեաներին:

Այս ժամանակ նահատակուեցան Թա-  
գէոս առաքեալը և Սանդուխտ կոյսը, որ  
Սանատրուկի աղջիկն էր. ոա չուրացաւ  
քրիստոնէութիւնը:

Ս. Թագէոսից յետոյ եկաւ Հայաստան  
Ս. Բարդուղիմէոս առաքեալը, որ նոյնուն  
Յիսուսի աշակերտն էր, և քարոզեց Քրիս-  
տոսի Աւետարանը: Մրան էլ Սանատրուկը  
նահատակել տուեց:

Ս. Թագէոս և ս. Բարդուղիմէոս առա-  
քեալները մեր երկիրը լուսաւորեցին քրիս-  
տոնէական հաւատի լուսով. սրա համար  
նրանք կոչում են Հայաստանի առաջին  
լուսաւորիչներ:

Այս տօնը կատարում է նոյնմբերի վերջին կամ  
գեկահմբերի սկզբին շաբաթ օրը:

18. ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՒԻՔ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը հայ իշխան՝  
Անակ Պահլաւունու որդին էր: Նա ծնուեց  
Վաղարշապատ քաղաքում: Անակը կրօնով  
հեթանոս էր:

Անակի մահից յետոյ Ս. Գրիգորի դայ-  
եակ Սոփիան, որ մի քարեպաշտ քրիստոնեայ  
էր, տարաւ մանուկին Կեսարիա քաղաքը,  
մկրտել տուեց և անուանեց Գրիգոր: Ս.  
Գրիգորը մեծացաւ Կեսարիայում և կրթուեց  
քրիստոնէական հոգով:

Երբ Ս. Գրիգորն իմացաւ, որ իր հայր  
Անակը սպանել է Հայոց Խոսրով թագաւո-  
րին և նրա որդին՝ Տրդատը զտնւում է  
Հոռոմ քաղաքում, զնաց նրան ծառայելու,  
որ հօր մեղքը քաւէ:

Տրդատը թագաւոր դարձաւ և եկաւ  
Հայաստան: Նա շնորհակալութեան զոհ բե-  
րեց հայոց Անահիտ դիցուհուն և Գրիգորին  
էլ հրամայեց, որ ծաղկեայ պատակ զնի ար-  
ձանի գլխին: Ս. Գրիգորը չկատարեց թա-  
գաւորի հրամանը և ասաց, որ ինքը քրիս-  
տոնեայ է:

Թագաւորը շատ բարկացաւ և շատ շարշարանքներ տուեց, բայց նա հաւատը շուրացաւ: Տրդատը հրամայեց ձգել նրան մահապարտների գուրը (խորվիրապ): Սուրբ Գրիգորը կենդանի մնաց այստեղ 15 տարի: Մի բարի կին ծածուկ կերակրում էր նրան:

Այս բանից յետոյ Տրդատը հիւանդացաւ և խելագարուեց: Բժիշկները շկարողացան նրան բժշկել: Յետոյ Աստուծու հրամանով հանեցին Ս. Գրիգորին Խոր Վիրապից և նա ազօթքով բժշկեց թագաւորին:

Այնուհետև ս. Գրիգորը քարոզեց քրիստոնէութիւնը և թագաւորն ու բոլոր ժողովուրդը հաւատացին Յիսուսին:

Թագաւորի հրամանով ս. Գրիգորը զընաց Կեսարիա, ձեռնադրուեց Ղեոնդ պատրիարքից Հայոց Հայրապետ և վերադառնալով Հայաստան՝ մկրտեց թագաւորին. իշխաններին և բոլոր ժողովրդին: Ճինեց շատ եկեղեցիներ և բաց արեց ուսումնարաններ: Մահմանեց եկեղեցական տօներ և Աստուծաշտութեան կարգեր:

Սուրբ Գրիգորն իր կեանքի վերջին տարիներում սկսեց ճգնաւորական կեանք

վարել և մեռաւ անյայտութեան մէջ: Հովիւները գտան նրա մարմինը և թաղեցին. իսկ յետոյ նրա նշխարները տեղափոխեցին Ս. Էջմիածին:

Սուրբ Գրիգորը լուսաւորեց մեր աշխարհը քրիստոնէական հաւատով. սրա համար էլ նա կոչվում է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

Ս. Գրիգոր Լուսաւորչի համար նշանակւած է երեք տօնմէկը՝ Խորվիրապ ձղելու, միւսը Խորվիրապից դուրս գալու և երրորդը՝ ս. Նշխարները գտնելու:

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԻՂԵՑՈՒ  
ՀԱՆԴԱՆԱԿԸ

ա). «Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երկելեաց և աներևութից»:

Հաւատում ենք մի Աստուածուն, ամենակալ Հօրը, երկնքի ու երկրի՝ երևելիների և աներևոյթների՝ Ստեղծողին:

Այս խօսքերով մենք դաւանում ենք, որ 1) կայ մի Աստուած և նա ունի երեք անձինք՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի. 2) Հայր Աստուածը իր Որդու և Սուրբ Հոգու հետ ստեղծեց ոչնչից երկինքը, երկիրը

և բոլոր տեսանելի ու անտեսանելի բաները — արարածները։ 3) Նա ամենակալ է և բոլոր արարածներին կառավարում է ու պահպանում իր իշխանութեան տակ։

թ). «Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն՝ յիւթենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ՝ լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի՝ երկելիք և աներեւոյթը։

Հաւատում ենք և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Աստուծու Որդուն, որ միածին է, ծնուած է Հօր Աստուծուց, այսինքն՝ Հօր էլութիւնից։

Աստուած է՝ Աստուծուց. լոյս է՝ լոյսից. ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ Աստուծուց ծնած է և ոչ թէ ստեղծուած։

Նոյն ինքն Հօր (Աստուծու) բնութիւնից է, որով ամեն բան եղաւ երկնքի մէջ և երկրի վրայ՝ երկելիներն ու աներեւոյթները։

Սրանով դաւանում ենք, որ 1) Սուրբ Երրորդութեան երկրորդ անձն է Յիսուս Քրիստոս. 2) Նա միածին է, այսինքն՝ չը կայ ուրիշ մէկը նրա նման, 3) Նա ծնուած է Հօր Աստուծուց յաւիտենից առաջ. ինչպէս լոյսը լոյսից՝ (ինչպէս լուսոյ ճառագայթը

անընդհատ կերպով յառաջ է գալիս արեգակից) և չէ ստեղծուած և 4) Նա համարնակից է Հօր Աստուծու հետ և ամենայն ինչ նրանով է եղած։

թ). «Որ յաղազս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իշեալյերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնուած կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ զմարմին, զնողի և զմիտ և զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք»։

Որ մեզ՝ մարդկանցո՝ և մեր փրկութեան համար երկնքից իջաւ, մարդ եղաւ և ծնաւ կատարեալ կերպով Սուրբ Կոյս Մարիամից Սուրբ Հոգով։

Որով (Ս. Հոգով) առաւ մարմին, հողի և միտք և այն ամենը՝ ինչ որ կայ մարդու մէջ՝ ճշմարտապէս և ոչ կարծիքով։

Սրանով մենք դաւանում ենք, որ 1) Աստուծու Որդին երկնքից իջաւ, այսինքն՝ երկրիս վրայ տեսանելի դարձաւ. 2) Նա մարմնացաւ, այսինքն, մարդկային բնութիւն առաւ Սուրբ Կոյս Մարիամից Սուրբ Հոգով և 3) Նա կատարելապէս մարդ դարձաւ, այսինքն՝ ոչ թէ միայն մարդկային մարմին ստացաւ, այլ և մարդկային հոգի ու միտք և եղաւ կատարեալ մարդ ու կատարեալ Աստուծու։

թ). «Զարչարեալ, խաշեալ, թաղեալ»։

Զարչարուեց, խաշուեց և թաղուեց։

Այս խօսքերով մենք դաւանում ենք, որ 1) Աստուծու Որդին—Յիսուս Քրիստոս չարչարուեց, այսինքն՝ ցաւ զգաց և մարդկային բնութիւնով կրեց բոլոր տանջանքները, 2) Նա իր յօժար կամքով Խոչի վրայ բարձրացաւ, որ մեզ ազատէ յաւիտենական պատժից ու մեղքից և 3) Նա մեռաւ մարմնով Խաչի վրայ և թաղուեց ինչպէս մարդ:

---

Ե). «Յերրորդ աւուր յարուցեալ»:

Երրորդ օրը յարութիւն առաւ:

Սրանով մենք դաւանում ենք, որ Աստուծու Որդին—Յիսուս Քրիստոս մարդկային բնութիւնով մեռնելուց յետոյ՝ երրորդ օրը Աստուածային զօրութեամբ կենդանացաւ.—յարութիւն առաւ:

---

Գ). «Ելեալ ի յերկինս նովին մարմնով նստաւ ընդ աջմէ Հօր»:

Նոյն մարմնով երկինք բարձրացաւ, նստեց Հօր աջկողմբ:

Այս խօսքերով մենք դաւանում ենք, որ 1) Աստուծու Որդին—Յիսուս Քրիստոս մարդկային մարմնով երկինք բարձրացաւ և 2) Նա նստեց Հօր աջկողմբ և դրանով ցոյց տուեց, թէ Նա ունի Հօր Աստուծու հետ հաւասար զօրութիւն ու պատիւ:

---

Է). «Փալոց է նովին մարմնով և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոշ գոյ վախճան»:

Պէտք է գայ նոյն մարմնով և Հօր փառքով կենդանին և մեռածներին դատելու համար, որի թագաւորութիւնը վերջ չունի:

Սրանով մենք դաւանում ենք, որ 1) Աստուծու Որդին—Յիսուս Քրիստոս կրկին պէտք է գայ աշխարհ Հօր փառքով. 2) Նա պէտք է դատէ կենդանիներին և մեռածներին և 3) այս ահեղ դատաստանից յետոյ կը գայ Նրա փառաց թագաւորութիւնը, որը վերջ չի ունենալ:

---

Ե). «Հաւատամբ և ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառարեալն և ընակեցաւ ի սուրբսն»:

Հաւատում ենք Սուրբ Հոգուն, որ անեղ (ոչ որից չէ եղել) և կատարեալ Աստուած է, որ խօսեց օրէնքների, մարգարէների և աւետարանների միջոցով: Որ Յորդանան գետն իջաւ, Առաքեալին (Քրիստոսին՝ Աստուծուց ուղարկուածին) քարոզեց և սրբերի մէջ բնակուեց:

Այս խօսքերով մենք դաւանում ենք, որ 1) Սուրբ Երրորդութեան երրորդ անձն է Ս. Հոգին. 2) Նա կատարեալ Աստուած է և համագոյակից է Հօր ու

Որդուն և հաւասար նրանց երկրպագելի. 3) Մարգա  
րէները և առաքեալներն Աստուծու կամքը մարդկանց  
յայտնելու և Սուրբ գիրքը գրելու ժամանակ խօսում  
ու գրում էին Սուրբ հոգու ներշնչութեամբ. 4) Երբ  
Քրիստոս մկրտում էր Յորդանան գետում, Սուրբ  
Հոգին իջաւ Նրա վրա աղաւնու կերպարանքով և  
քարոզեց, թէ Նա ուղարկած է Հօրից և 5) Նա  
բնակուեց արքերի մէջ:

թ). «Հաւատամբ և ի միմիայն ընդհան-  
րական և առաքելական եկեղեցի»:

Հաւատում ենք մի, ընդհանրական ու առաքելական ե-  
կեղեցի:

Այս խօսքերով դաւանում ենք, որ 1) Յիսուս  
Քրիստոս իր հաստատած եկեղեցու—հաւատացեալնե-  
րի հետ է միշտ և տալիս է նրանց շնորհ և 2) այդ  
եկեղեցին Մի է, Սուրբ է և Ընդհանրական ու Սոս-  
քելական է:

ժ). «Ի մի մկրտութիւն, յապաշխարու-  
թիւն, ի քաւութիւն և ի թողութիւն  
մեղաց»:

(Հաւատում ենք) մի մկրտութեան, ապաշխարութեան,  
և մեղաց քաւութեան.

Հաւատամբի այս խօսքերով մենք դաւանում ենք,  
որ 1) մկրտութեամբ մարդ աղաւում է սկզբնական

մեղքից և արժանի է լինում ստանալու Սուրբ Հոգու  
շնորքը և դառնում է երկնաւոր Հօր (որդեգիլ և 2)  
ճշմարիտ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ  
մարդ թողութիւն է ստանում այն մեղքերից, ինչ որ  
նա գործել է մկրտութիւնից յետոյ,

ժա). «Ի յարութիւն մեռելոց»:

(Հաւատում ենք) մեռելների յարութեանը:

Սրանով մենք դաւանում ենք, որ 1) վերջին  
դատաստանի օրն Աստուծու հրամանով բոլոր մեռած  
մարդոց մարմինները կը կենդանանան—յարութիւն  
կ'առնեն և կը միանան իրենց հոգիների հետ և այ-  
նուհետև կը լինին անապական և անմահ, իսկ որոնք  
դեռ կենդանի կը լինեն. մի ակնթարթում կը փոխ-  
ուին և կը դառնան նոյնպէս անապական և անմահ:  
Մեռելների յարութեամբ կը փոխուի բոլոր տիեզերքը  
—կը լինի նոր երկինք և նոր երկիր:

ժբ). «Ի դատաստանն յաւիտենից հոգոց  
և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի  
կեանսն յաւիտենականս»:

(Հաւատում ենք) հոգիների և մարմինների վերջին դա-  
տաստանին, երկնքի արքայութեանը և յաւիտենական  
կեանքին:

Այս խօսքերով մենք դաւանում ենք, որ 1) հո-  
գիները և մարմինները պիտի դատուին Յիսուս Քրիս-

տոսից և իւրաքանչիւրը պիտի ստանայ իր արածի փոխարէնը և 2) մեռեների յարութիւնից յետոյ կը կառւի մի նոր—յաւիտենական կեանք։ Այս կեանքը արդարների համար կը լինի երանելի, իսկ մեղաւորների համար՝ տանջանք։ Երանելի կեանքը կոչւում է դրախտ և երկնքի արքայութիւն, իսկ տանջանքը՝ դժոխք։

## ՏԱՄՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ

I. «Ես եմ Տէր Աստուած քո, մի՛ եղիցին քեզ այլ աստուածը բաց յինչն»։

Ես եմ քո Տէր Աստուածը, ուրիշ աստուածներ չունենաս բացի ինձանից։

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ Նրան միայն ճանաչենք ճշմարիտ Աստուած, հաւատանք Նրան, յոյս գնենք Նրա վրայ, սիրենք, երկրպագենք և աղօթենք։ Արգելում է ուրիշ աստուածներ ունենալ և պատել նրանց ինչպէս Աստուած։

Հրեշտակներին և սուրբ մարդոց մենք միայն յարգում—պատում ենք և մեր այդ պատիւն ու յարգանքը վերաբերում են նրանց Աստուածային շնորհին ու զօրութեանը, որոնց միջոցով նրանք ծառայել են Աստուածուն և կատարել են բարի գործեր։

II. «Մի աբասցես զու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան... մի՛ երկիրպագանիցես նոցա և մի՛ պաշտեսցես զնոսա»։

Ոչ մի բանի նմանութեամբ կուռք մի շինիր, երկրպագութիւն մի տուր և մի պաշտիր նրանց։

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք որևէ բանի նման, կամ որևէ առարկայ կուռք չը շինենք և Աստուածային պատիւ չը տանք նրան, այն է՝ չը պաշտենք, յոյս չը գնենք նրա վրայ՝ ինչպէս Աստուածու վրայ։

Սուրբ պատկերների գործածութիւնը կռապաշտութիւն չէ, որովհետև մենք նրանց չենք պաշտում ինչպէս Աստուած, այլ միայն յարգում ենք և այն էլ ոչ թէ ձեռագործ պատկերը, այլ նրա վրայ նկարածի նախատիպը։ Նկարուած տէրունական պատկերի մէջ՝ Աստուածուն ենք երկրպագում, իսկ սրբերի պատկերների մէջ յարգում ենք նրանց Աստուածանոյ սըբութիւնը։

Սուրբ պատկերները գործ ածելու նպատակն է, որ մենք նրանց նայելով յիշենք Աստուածու և նրա սըբերի գործերը ու օրինակ առնենք։

III. «Մի առնուցուս զանուն Աստուածոյ քո ի վերայ մնոտեաց»։

Զուր տեղ քո Աստուածու անունը մի յիշեր։

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք նրա անունը գործ ածենք իբրև սըբութիւն

և յարգենք այն ամենը, ինչ որ Նրա անուանն է նուիրած—օրինակ՝ տաճարներ, մատուռներ, պատկերներ և եկեղեցական իրեղեններ:

Նաև պատուիրում է, որ մեր աղօթքների և խօսակցութիւնների ժամանակ երկիւղածութեամբ յիշենք ու արտասանենք Նրա անունը: Չերդուենք Նրա անունով զուր տեղ և անարդարութեամ ժամանակ. իսկ եթէ երդուել ենք, հաստատ պահենք մեր տուած երդումը: Երդում է կոչվում այն խոստումը, որ արտասանուում է Խաչի և Աւետարանի առաջ՝ քահանայի ներկայութեամբ:

IV. «Յիշեա սրբել զօր շաբաթու զվեց օր զործեսցես և արացես զամենայն զործս ըո, իսկ զեօթներորդ օրն, շաբաթ, նուիրեա Տեառն ըում»:

Մաքումդ պահիր, որ շաբաթ օրը սուրբ պահես. վեց օրուայ մէջ քո գործերդ արա, իսկ եօթներորդ օրը քո Տէր Աստուծուն նուիրիր:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ շաբաթ օրը (ըրիստոնեաններիս համար կիրակի), նոյնպէս և ուրիշ տօն օրերը նուիրենք սուրբ գործերին: Աստուած պատուիրում և կեանքի մէջ այս տեսակ կարգ պահել, այն է՝ վեց օշ աշխատել և գործել մարմնաւոր գործեր, իսկ տօնին հանգստանալ գործերից և կատարել Աստուծուն հաճելի գործեր:

Աստուծու համար գործերն են՝ եկեղեցի գնալ, ներկայ լինել Աստուածպաշտութեան, աղօթել:

Կարդալ ս. Գիրքը, սովորել Աստուծու օրէնքները և մեր նմաններին բարութիւն անել—այն է՝ աղքատներին ողորմութիւն տալ, հիւանդներին այցելել, որբերին խնամք տանել, խեղձերին օգնել և այլն:

Բայց եթէ անյետաձգելի գործ է և պահանջւում է գործել տօն օրերին, ինչպէս են՝ անասուններին կերակուր ու ջուր տալ, հրդեհից ու հեղեղից մարդիկ ազատել, հիւանդների մասին հոգալ, պատերազմել կամ թշնամու յարձակմունքին դիմադրել և այլն, ոչ թէ կարելի է, այլ պէտք է անպատճառ անել:

V. «Պատուեա զհայր քո և զմայր, զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս ի վերայ երկրի»:

Պատուիր քո հօրը և մօրը, որ քեզ համար լաւ լինի և երկար ապրես աշխարհի վրայ:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք պատուենք մեր ծնողներին և իբրև երախտագիտութեան նշան՝ միշտ յարգանքով վերաբերուենք նրանց և աշխատենք ամեն բանի մէջ ուրախութիւն և մխիթարութիւն պատճառել նրանց: Բացի այդ՝ օգնենք նրանց հիւանդութեան, ծերութեան և կարօտութեան ժամանակ. աղօթենք նրանց համար և լսենք ու կատարենք նրանց բարի խրատները:

Այս պատուիրանով Աստուած նմանապէս հրամայում է, որ մենք յարգենք և այն մարդոց, որոնք ծնողների տեղն են բռնում:

Այս պատուիրանը կատարողներին Աստուած խոստանում է երկար կեանք և բաղդաւորութիւն:

### V I. «Մի սպանիր»:

Մի սպանիր:

Այս պատուիրանով Աստուած արգելում է սպանութիւնը, նմանապէս նիւթական և բարոյական վնաս տալը՝ թէ իրան և թէ ուրիշներին:

Սպանութիւնը ներելի է համարւում միայն պատերազմի ժամանակ, ևրբ նա լինում է եկեղեցու օգտի, հայրենիքի փրկութեան համար:

Արգելում է, որ չ'անենք այնպիսի գործ, ինչ որ կարող է վնաս տալ ուրիշի կեանքին, օրինակ՝ ծեծ, կոփւ, վէճ, խիստ վարմունք, ոխ, ատելութիւն, նախանձ, բարկութիւն, խօսքով վիրաւորանք և չափից գուրս ստրկական ծառայութիւն:

Իւրաքանչիւր մարդ պարտաւոր է պահպանել թէ ուրիշի առողջութիւնը և թէ իրը, այլապէս նա ինքնասպանութիւն գործած կը լինի, որ մեծ յանցանք է. իսկ այն գիպուտածներում երբ լինում է թշնամու յարձակում, հրդեհ, հեղեղ, ժանտախտ և սրանց նման հասարակական թշուառութիւններ, ամեն մինը բարոյական պարտաւորութիւն ունի չը խնայել իր առողջութիւնը և մինչև անդամ իր կեանքն ուրիշների փրկութեան համար:

### VII. «Մի շնար»:

Շնութիւն մի անիր:

Այս պատուիրանը հրամայում է մեզ, որ մենք մաքուր լինենք, չունենանք սրտի չար ցանկութիւններ և չար մտածմունքներ. հեռանանք վատ խօսակցութիւններից և երգերից:

### VIII. «Մի գողանար»:

Գողութիւն մի անիր:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք գողութիւն չանենք, չը խենք, չը յափշտակենք, չը պահենք ու չը ծածկենք ուրիշի կարողութիւնը և աշխատանքը և չարատաւորենք ուրիշի բարի անունը: Զը թագնենք գտած բանը, չը գնենք մեզ յայտնի գողացած իրը: Զը խաբենք առևարի մէջ և խարդախութիւն չանենք չափի ու կշռի մէջ: Զը կտրենք մշակների և ծառաների վարձը: Մեր պարտքը վճարենք և մեզ պահ տուածը (աւանդը) վերադարձնենք:

### IX. «Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ»:

Քո ընկերոջ մասին սուտ վկայութիւն մի տուր:

Այս պատուիրանով Աստուած արգելում է մեզ, որ մենք սուտ վկայութիւն չը տանք թէ դատարա-

նում և թէ հասարակութեան մէջ, այլ լինինք միշտ ճշմարտախօս։ Արգելում է զրպարտելը, բանբասելը, ուրիշի խօսածը կամ գրածը յեղաշրջել և ուրիշ կերպ մեկնել։ Արգելում է մատնելը, վասանելը, արժանաւորներին անուանարկելը, իսկ անարժաններին գովաբանելը։

## X. «Մի ցանկանար տան ընկերի քո և մի ամենայնի, որ ինչ նորա իցէ»։

Քո ընկերոջ տան վրայ աչք մի ունենար և ոչ այն բաների վրայ՝ ինչ որ նրանն է։

Եյս պատուիրանով Աստուած հրամայում է մեղ, որ մենք չար աչք, չար ցանկութիւն չունենանք մեր ընկերոջ ունեցածի վրայ։ Զը նախանձենք նրա բաղդաւորութեան, յաջողութեան, յառաջդիմութեան և առհասարակ նրա ներքին ու արտաքին լաւ կողմերի վրայ։ Զարատաւորենք և չանպատուենք նրան որևէ բանով։ Զը յափշտակենք նրանից ոչ մի բան և ի չարը գործ չը գնենք նրա բարեմտութիւնը ու ընկերական հաւատարմութիւնը, այլ ունենանք սրտի սրբութիւն դէպի նա և լինենք գոհ մեր ունեցածովը։

## ՄԱՍՆ ՀԱՐՐՈՐԴ

ՀԱՄԱԾԸ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Աստուածպաշտութիւն են կոչում այն եկեղեցական ծառայութիւնները, որոնք կատարում են նշանակած ժամանակներում, որոշած կարգով ու ծէսերով, ինչպէս ցոյց է տալի եկեղեցական կանոնագիրը։

Այդ ծառայութիւնների ժամանակ հայ քրիստոնեաները փառաբանում են Աստուծուն, շնորհակալութիւն են յայտնում և խնդրում նրա ողորմութիւնն ու օգնութիւնը։

Եկեղեցական ծառայութիւնները լինում են երկու տեսակ. 1) մշտական, որ կատարում է ամեն օր բոլորի համար. 2) պատահական, որ կատարում է հաւատացեալների կրօնական պահանջի համաձայն և կոչում է հոգեւոր պիտոյք, օրինակատարութիւն։

Աստուածպաշտութեան մշտական ծառայութիւնը լինում է երեկոյեան, առաւտեան եւ ճաշին. իսկ օրինակատարութիւնները, որոնք եկեղեցու խորհուրդներն ու ննջեցեալի թաղումն են, կատարում են, եթե պահանջ կայ։

ՏԱՅԱՐ, ՆՐԱ ԱՐՏԱԲԻՒՆ ՏԵՍՔԸ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱ-ԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Աստուածպաշտութիւնը մեծ մասամբ կատարում է նրա համար շինուած տան մէջ, որ կոչում է տաճար—եկեղեցի։ Նա կառուցում է կամ նաւածել կամ խաչածել։ Մուտքը լինում է արեմտեան կողմէց եկեղեցու կամարների գլխին շինուում է մի կամ մի քանի զմբէթ, իսկ գլխին խաչ։ Եկեղեցու շինութիւնը բաժանում է երեք մասի։

1) Գալիթ, ուր կանգնում էին հին ժամանակ չմկրտուածները և ապաշխարողները։ Նոր շինած եկեղեցիներից շատերը չունին այդ մասը։

2) Տաճար, որ եկեղեցու իսկական մասն է, ուր կանգնում է ժողովուրդը. առջև՝ մարդիկ, յետել՝ կանայք։ Շատ եկեղեցիներում կանանց մասը, որ բաժանված է լիւնում տղամարդկանցից, լինում է երկյարկանի և վերին յարկը կոչում է վերնատուն։ Տաճարի այն մասը, ուր կարգացում են փոխ առ փոխ սաղմոսներ և հանդիսաւոր տօներին կատարում են նախատօնակներ, կոչում է ատեան։ Ատեանի աջ ու ձախ կողմերը կոչում են դասեր, ուր կանգնում են հոգեւորականներն և երգում հոգեւոր երգերշարականներ։ Դասերը կոչում են աջակողմնեան եւ ծանիակողմնեան։ Աջակողմեան դասի պատում շինուած է մըկրտութեան աւազանը իսկ ձախակողմեանում՝ ինկանոցը։

3) Բեմը, որ բարձր է տաճարից աստիճաններով, ներկայացնում է Գողգոթա սարը, ուր Փրկիչը խաչուեց: Բեմի մէջ տեղը վեմ քարի վրայ շինած է սեղան, ուր կատարում է հաղորդութեան սուրբ խորհուրդը: Սեղանի վերև շինած է խաչալ: Մի քանի եկեղեցիներում խաչալը ունենում է դռներ, որոնց վրայ նկարած են լինում սուրբ Թաղէսս և սուրբ Բարդողիմէսս առաքեալների պատկերները:

Սեղանի վրայ դրւում են՝ ամենից վերև խաչ, յետոյ տէրունական պատկեր, ապա աւետարան, որս աջ ու ձախ Կողմերում մասնատուվը, մեռնաշիշը եւ մոմականներ:

Սեղանի աջ կողմը՝ պատի մէշ շինած է ընծայարանը, ուր լինում է սկիզբ, իսկ ձախակողմը՝ Նշխարարանը, ուր լինում են սուրբ պատարագի համար պատրաստած հացն ու գինին.

Բեմի աջ և ձախ կողմերում շինած են խորաններ, մէկում զգեստաւորւում է քահանան, իսկ միւսում պահւում են եկեղեցական անօթները, զգեստներն ու զարդերը:

Եկեղեցուն կից կամ նրանից փոքր ինչ հեռու՝ շինած է զանգակատունը: Աստուածպաշտութեան ժամանակ զանգի ձայնով քրիստոնեանները հրաւիրւում են եկեղեցի:

Հնդհանրապէս հանգուցեալներին թաղում են առանձին տեղ՝ քաղաքից և գիւղից գուրս, որը կոչւում է զերեզմանատուն կամ հանգատարան:

### ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ

Եկեղեցու պաշտօնեանները ժողովրդից ընտրուած մարդիկ են և բաժանւում են երկու մասի՝ սրբազնազործ և ստորին:

Սրբազնազործ են՝ սարկաւազը, քահանան, եպիսկոպոսը և Կաթողիկոսը, իսկ ստորին՝ կիսասարկաւազը, ջահընկալը, երդմնեցոցիշը, դպիրը և դրանպանը:

Եկեղեցու պաշտօնեանները Աստուածպաշտութեան ժամանակ գործ են ածում առանձին հանրերմներ—զգեստներ: Ստորին պաշտօնեանները հագնում են միայն ժամանակի սարկաւազը՝ ժամանակի եւ ուրար: Քահանան՝ ժամանակ:

պիկ, փորուրար, գօտի, ղենջակ, բազպան, վակաս, շուրջառ, սաղաւարտ և փիլօն: Եպիսկոպոսը բացի քահանայական զգեստներից գործ է ածում եմիփորուն, արտախուրակեներ և սաղաւարտի տեղ՝ թագ: Կաթողիկոսը բացի քահանայական և եպիսկոպոսական զգեստներից գործ է ածում կոնքեռ և արծուէ գորգ:

Կաթողիկոսը և եպիսկոպոսը կրում են մատանի, առաջնը՝ մատանի մատում, իսկ երկրորդը՝ ճկոյթ մատում: Գործ են ածում նաև գաւազան, առաջնը՝ հովհական, իսկ երկրորդը՝ օձազլուի:

### ՍՐԲԱԶԱՆ ԱՆՕԹՆԵՐ ԵՒ ԶԱՐԴԵՐ

Աստուածպաշտութեան ժամանակ եկեղեցում գործ են ածուում սկիճ, մաղզմայ, մասնատուփ, բաժակաման, մեռոնաշիշ, բուրփառ, տապանակ, խաչուառ, խաչ, աշտանակ, կերոն, կոնք, դոյլ, ղենջակ և այլն:

### Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՍԻՆ

Պատարագ է կոչւում այն Աստուածպաշտութիւնը, որի ժամանակ կատարւում է սուրբ հաղորդութեան խորհուրդը: Այս ծառայութիւնը կատարւում է առաւտեան, մեծ մասամբ ճաշին և տարին երկու մանգամ երեկոյեանները—Ծննդեան և Զատկի ճրագալոյցներին:

Պատարագի արարողութիւնը բաժանւում է երեք մասի: 1) զգեստաւորութիւն եւ սպաս ղնել, 2) պատարագ երեխայից և 3) պատարագ հաւատացելոց:

Պատարագի առաջին մասում դպիրներն երգում են «Խորհուրդ խորին» շարականը: Քահանան մտնում է խորան և զգեստաւորուում: Դուրս գալով խորանից, լուսնում է ձեռքերը, որ նշան է սրտի մաքրութեան, և դառնալով դէպի ժողովուրդը՝ հրապարակով խոստովանում է իր մեղքերը և խնդրում Աստուածուց թողութիւն: յետոյ բարձրանում է բեմը: Քաշւում է վարագոյրը. այստեղ քահանան աղօթում է և դնում սպասը. բերում են հացն և գինին խորհրդի համար: Քահանան նշխարը դնում է մաղզմայի վրայ և գինին ածելով սկիճի մէջ ասում է՝ «Յիշատակ Տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի» յետոյ քողով ծածկում է և ասում.  
«Հոգին Սուրբ եկեղէ ի քեզ»: Ապաս զնելը յիշեցնում է  
հաւատացեալներին Քրիստոսի ծնունդը: Վարագոյրի բանալը  
և քահանայի բեմից իջնելը ու ժողովրդին խնկարկելը նշան  
է Քրիստոսի աշխարհ գալուն:

Պատարագի երկրորդ մասը սկսում է «Օքնեալ Թա-  
գաւորութիւնն Հօր և Որդոյ և Հոգուն Սրբոյ»: Այդ ժա-  
մանակ երգում է «Ուրբա Աստուածը», վերաբերում են Ա-  
ւետարանը, կարգում են Սուրբ Գրքից կտորներ, ապա Աւե-  
տարանը և ասում են Հաւատամքը: Պատարագի այս մասը  
կոչում է պատարագ երեխայից, որովհետեւ այս ժամանակ  
կարող են ներկայ լինել ոչ միայն հաւատացեալները, որոնք  
ընդունել են քրիստոնէութիւնը, այլև նրանք, որոնք ցան-  
կութիւն են յայտնել ընդունելու, բայց չեն մկրտուել. նաև  
ապաշխարողները և թերահաւատները: Պատարագի այս մասը  
յիշեցնում է Քրիստոսի յայտնութիւնը աշխարհում և նրա  
քարոզութիւնները:

Պատարագի երրորդ մասը կոչում է պատարագ հա-  
ւատացելոց, որովհետեւ այս ժամանակ կարող են ներկայ  
լինել միայն հաւատացեալները: Այս մասը սկսում է վերա-  
բերումից, երբ սկիհը ընծայարանից բերում, դնում են սե-  
ղանի վրայ: Սա յիշեցնում է մեզ Քրիստոսի զնալը գէպի  
չարչարանք և մահ: Ապա ասում է ողջոյնը, որը յիշեցնում  
է, թէ ոչ ոք սրտի մէջ ատելութիւն, թշնամութիւն չպէտք  
է ունենայ: Յետոյ երգում է երեքսրբեան երգը՝ «Սուրբ,  
սուրբը», որից յետոյ խորհրդառը կերպով արտասանուում  
են Փրկչի խօսքերը «Անէք, կերէք, այս է մարմին իմ» և  
Արքէք ի սմանէ ամեններնան, այս է արին իմ»: Ապա  
երգում է տէրունական աղօթքը—Հայր մերը: Յետոյ չո-  
քում, երգում են «Միայն սուրբ, միայն տէր» և Քրիստոս  
պատարագեալը, որի ժամանակ արժանաւորները հաղորդ-  
վում են: Վերջապէս գալիքներն երգում են գոհացողական  
երգերը՝ «Լցաք ի բարութեանց քոց» և «Գոհանամք», որից  
յետոյ քաշում է վարագոյրը և քահանան իջնելով բեմից  
կարդում է Աւետարանը և պահպանիչով օրէսում ժողովրդին:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

#### Աղօթքներ

- |    |                                      |   |
|----|--------------------------------------|---|
| 1. | Երկու խօսք                           | 5 |
| 2. | Աղօթքը և նրա արտաքին նշանները        | 7 |
| 3. | Աղօթքի տեղը, ժամանակը և ամելու կարգը | 9 |

Աղօթքների համարու բացատրութիւնները

- |     |                                |    |
|-----|--------------------------------|----|
| 1.  | Համարու փառաբանութիւն Աստուծու | 10 |
| 2.  | Աղօթք Քրիստոսի խաչելութեան     | 11 |
| 3.  | Աղօթք տէրունական               | 12 |
| 4.  | Աղօթք դասից առաջ               | 16 |
| 5.  | Աղօթք դասից յետոյ              | 17 |
| 6.  | Աղօթք ճաշից առաջ               | 18 |
| 7.  | Աղօթք ճաշից յետոյ              | 19 |
| 8.  | Աղօթք Քրիստոսի Յարսւթեան       | 19 |
| 9.  | Աղօթք թագաւորի համար           | 20 |
| 10. | Աղօթք Սուրբ Աստուծածնի         | 21 |
| 11. | Աղօթք առաւտեան                 | 22 |
| 12. | Աղօթք երեկոյեան                | 23 |

### ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Գլխաւոր տօների համարու պատմութիւնները

- |    |                         |    |
|----|-------------------------|----|
| 1. | Մարիամ Ս. Կուսի ծնունդը | 24 |
| 2. | Երեք տարեկան ընծայումը  | 25 |

<b>Ա. Մարիամի Ս. Կուսի Աւետումը</b>	25
<b>Ք. Քրիստոսի Ծնունդը</b>	27
<b>Տ. Տեառնդառաջ</b>	28
<b>Ք. Քրիստոսի Մկրտութիւնը</b>	29
<b>7. Այլակերտութիւն Տեառն</b>	30
<b>8. Ծաղկազարդ</b>	31
<b>9. Աւագ Հինգշաբթի</b>	33
<b>10. Յիսուսի Խաչելութիւնը</b>	34
<b>11. Յիսուսի Թաղումը</b>	36
<b>12. Քրիստոսի Յարութիւնը - Զատիկ</b>	37
<b>13. Քրիստոսի Համբարձումը</b>	38
<b>14. Հոգեգալուստը</b>	39
<b>15. Ս. Աստուածածնի Վերափոխումը</b>	39
<b>16. Ս. Խաչի Գիւտը</b>	40
<b>17. Ս. Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալները</b>	41
<b>18. Ս. Գրիգոր Լուսաւորիչ</b>	43

### ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ


<b>1. Հայաստանեայց առաքելական եկեղեցու</b> Հաւատոյ Հանդահակը . . . . .	45
<b>2. Տամն պատուիրանները</b> . . . . .	52

### ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

<b>1. Համառօտ տեղեկութիւն Աստուած պաշտութեան մասին</b> . . . . .	58
<b>2. Ս. պատարագի մասին</b> . . . . .	61

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յանկ



ՄԵՐ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Դաստիրք հայկ. ձայնագրութեան, դ. տպագրութիւն (սպառուած) . . . . . 60 կ.
2. Մանկական ձայնագրեալ երգարան ա. տպագրութիւն . . . . . 40 կ.
3. Ազգային ձայնագրեալ երգարան, ա. տպագրութիւն . . . . . 80 կ.
  


---

4. Դաստիրք կրօնի, ա. գրքոյկ 9-ըդ տպագրութ . . . . . 20 կ.
5. Դաստիրք կրօնի, բ. գրքոյկ 5-ըդ տպագրութ . . . . . 30 կ.
6. Դաստիրք կրօնի, գ. գրքոյկ 3-ըդ տպագրութ. . . . . 30 կ.

Վաճառում են Թիֆլիսի «Կենդրոնական միւս գրավաճառանոցներում», և աշխատասիրողի մոտ՝  
Տիֆլիս, Протоіерею Езнику Еրзинкяնъ.



